ՐԱՖՖԻ

Գերեզմանք

Անապատ դաշտում, խուլ, լայնատարած,
Սփռված են անթիվ հիշատակարանք,
Այստեղ մարդերի, հինավուրց մեռած,
Պահվում են խնամքով մարմնի փշրանք:

Ահա՛ նոր աշխարհ, ուր որ տիրում է
Աստուծո հանգիստ միաբանություն,
Այստեղ ճշտորեն հանդիսանում է՝
Սեր, եղբայրություն, հավասարություն:

Արքա և կայսր, երկրի տիրապետ,
Բավականացած քանի գազ հողով,
Յուրյանց ստրուկ հպատակաց հետ
Են պառկած միասին՝ հաշտությամբ, սիրով:

Եվ բռնակալն, արյան ծարավին,
Թափելով սրտեն թույն և չար նախանձ,
Վրեժխնդիր սիրտն էլ չէ բնավին
Խորհում յուր զոհերն առնել գիշախանձ:

Եվ հարստականն, արծաթո մոլին,
(Փողից կշտացած է սիրտն անհագ)
Էլ չէ աշխատում խաբել ընկերին,
Որսալ նորանից շահավետ վաստակ:

Եվ ավազակը՝ թողելով կողոպուտ,
Նա էլ աչք չունի հարստի կամքին,
Չէ հափշտակում նա այլոց օգուտ,
Կարծես, զղջացել է նորա հոգին:

Եվ մուրացկանը, օտարի կարոտ,
Ձեռքը չէ ձգում խնդրելու դրամ,
Անգութ ագահի դեմքը կնճռոտ
Չէ՛ զարհուրեցնում խղճին անխնամ:

Եվ ախտաբորբոք, մոլի տարփածուն,
Հուպ գեղագանգուր, մատղահաս կուսին,
Նորա սիրտն որսալ էլ չէ մտածում,
Հանգած է սերը նոցա երկուսին:

Ահա՛ մարգարեի5 գուշակած աշխարհ,
Ուր բնակվում են գայլն ու գառնուկ,
Ուր են հավասար, միմյանց եղբայր՝
Իշխան, թագավոր, գերի և ստրուկ...